

ԽՆՋՈՒՅՔ

Ծրագրավորման օլիմպիադայից հետո մասնակիցները ուզում են կազմակերպել խնջույք: Բայց խնջույքից հետո մասնակիցները հոգևած են լինում և չեն կարող երկար քայլել դեպի տուն: Սովորաբար մասնակիցները գնում են խնջույքի, եթե այն տանից մինչև 2,5 կմ հեռավորության վրա է:

Ձեր խնդիրն է խնջույքը կազմակերպել այնպիսի վայրում, որ մասնակիցների քանակը լինի մաքսիմալ:

Համարեք, որ քաղաքը ունի քառակուսու տեսք, որի կողմը 50 կմ է: Մասնակիցները խնջույքից հետո կարող են գնալ ուղիղ գծով դեպի տուն:

Մուտքը

Մուտքային տվյալները բաղկացած են բազմաթիվ տողերից, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է երկու իրական թիվ - մասնակցի տան (x, y) կոորդինատները: Բոլոր կոորդինատները 0.0-ից 50.0 միջակայքում են, և նույն կոորդինատներով երկու տարբեր տներ չեն կարող լինել: Անհրաժեշտ է մուտքային ֆայլից կարդալ բոլոր տողերը մինչև ֆայլի ավարտը: Մասնակիցների քանակը ամենաշատը 200 է:

Ելքը

Անհրաժեշտ է արտածել մեկ ամբողջ թիվ - խնջույքին մասնակցողների մաքսիմալ քանակը:

Օրինակ

Մուտքը

4.0 4.0

4.0 5.0

5.0 6.0

1.0 20.0

1.0 21.0

1.0 22.0

1.0 25.0

1.0 26.0

Ելքը.

4